ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Լորեդո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3» ծածկագրով գնանշման հարցում, տոներային քարտրիջների, տոներների, համակարգչային սարքերի և համակարգչային սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ոառումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4042-2020 գրությամբ «Լորեդո» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 13.03.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/781-2020 գրության հիման վրա, 16.03.2020թ.-ին «Լորեդո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.03.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/77 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին և 15.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.03.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/781-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսունասիրելով «Լորեդո» ՍՊԸ-ի հայտը պարզեց, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացառությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների մնացած չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են «կամ համարժեք» բառերով:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց շտկված տարբերակները որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ 6-րդ չափաբաժնի, որը կրկին ներկայացվել է «կամ համարժեք» բառով, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները որոշեց 6-րդ չափաբաժնի մասով մերժել վերջինիս հայտը:

Կից ներկայացվում է վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Լորեդո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Լորեդո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4042-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 27.03.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Լորեդո ՍՊԸ-ն ս/թ փետրվարի 18-ին մասնակցել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3 ծածկագրով ընթացակարգի հրավերին: Հայտերը բացվել են ս/թ փետրվարի 19-ին ժ 11:00:

Ս/թ փետրվարի 27-ին ժ 16:37 ստանում ենք ծանուցում անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Նույն օրը ժ 16:49 շտկված հավելվածը էլեկտրոնային փոստով ուղարկում ենք համապատասխան էլ. հասցեին: Այսինքն պատշաճ կերպով տասներկու րոպեի ընթացքում կատարում ենք խնդիրները, ցուցաբերելով բարձր կարգապահություն և պարտաճանաչություն:

Անհամապատասխանությունները թվով 29-էին՝ բոլոր չափաբաժիններում գրված է եղել <<կամ համարժեք>> բառերը: 28 չափաբաժնում կատարվում են շտկումներ, մեկ չափաբաժնում տեղի է ունենում տեխնիկական վրիպակ, այսինքն յուրաքանչյուր չափաբաժին ուղելուց հետո վորդ ծրագրով տրվում է հիշել հրահանգը, սակայն տեխնիկական պատճառներով 6-րդ չափաբաժնում ծրագիրը չի կատարում համապա-

փասխան հիշեցումը: Մենք նպատակ չենք ունեցել չկատարել հանձնաժողովի հրահանգը, ընդհակառակը այն կատարել ենք օպերատիվ և առավելագույն սեղմ ժամանակահատվածում:

Այնուհետև ս/թ մարտի 10-ին ստանում ենք «Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի անձանագրություն», որը կազմված է եղել ս/թ փետրվարի 09-ին ժ 11:00, ինչը ակնհայտ կեղծ է: Այսինքն դեռևս արմեպս համակարգում տեղադրված չի եղել հրավերը, սակայն այս հանձնաժողովը արձանագրություն է կազմել է:

Այնուհետև մարտի 10-ին 18:16 ստանում ենք «Հայտարարություն պայմանագիր կնքելու մասին», որի ուսումնասիրմամբ պարզվում է, որ այս հանձնաժողովի դեռևս 2019 թվականի մարտի 10-ի թիվ 4.1 որոշմամբ արդեն հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ «Գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի անձանագրությունը» և «Հայտարարությունը պայմանագիր կնքելու մասին» նախապես պատրաստված են եղել, ընտրված է եղել հաղթող մասնակիցների ցանկը:

Այսինքն տեղի է ունեցել մի գործընթաց, որտեղ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ակնհայտ կերպով թույլ է տվել բազմաթիվ խախտումներ:

Հարգելի պարոն Օհանյան մենք կարծում ենք, որ նշված «Արձանագրությունը» և «Հայտարարությունը պայմանագիր կնքելու մասին» չեն կարող լինել օրինական և իրավաչափ, ուստի և դրանից բխող պարտավորությունները և դրանում տեղ գտած որոշումները անօրինական են և ենթակա չեն կատարման:

Ուստի ելնելով վերը նշված փաստական տվյալներից խնդրում ենք Ձեզ Լորեդո ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով հայտը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տոներային քարտրիջների, տոներների, համակարգչային սարքերի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լորեդո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից բացառությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների՝ մանցած չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են «կամ համարժեք» բառերով:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

27.02.2020թ.-ին գնումների համակարգողը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին, և հայտնել է, որ «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից բացառությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների՝ մանցած չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են «կամ համարժեք» բառերով՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը (մեկ աշխատանքային օրվա ընթացքում) շտկել նշված անհամապատասխանությունները, իսկ շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովը 05.03.2020թ.-ին շարունակելով գնահատման աշխատանքները, արձանագրել է, որ «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված տարբերակները համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ 6-րդ չափաբաժնի, որը կրկին ներկայացվել է «կամ համարժեք» բառով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է 6-րդ չափաբաժնի մասով մերժել «Լորեդո» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.03.2020թ.-ին՝ թիվ ՊՆ/ՊՆ/02/781-2020 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4042-2020 գրությամբ «Լորեդո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տոներային քարտրիջների, տոներների, համակարգչային սարքերի և համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով 11.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից բացառությամբ 1-ին և 2-րդ չափաբաժինների՝ մանցած չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են «կամ համարժեք» բառերով, ինչով պայմանավորված հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները, ինչի մասին 27.02.2020թ.-ին գնումների համակարգողը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին:

Հանձնաժողովը 05.03.2020թ.-ին շարունակելով գնահատման աշխատանքները, արձանագրել է, որ «Լորեդո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված տարբերակները համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ 6-րդ չափաբաժնի, որը կրկին ներկայացվել է «կամ համարժեք» բառով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է 6-րդ չափաբաժնի մասով մերժել «Լորեդո» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.03.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/781-2020 գրությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 05.03.2020թ.-ին՝ հիմք ընդունելով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/3-5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Լորեդո» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 13.03.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով

նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն

իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4042-2020 գրությամբ «Լորեդո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/77 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ